

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅՈՍՏԱԿԱՆ ՏԵՂԸՆԳՐԱԽԹԻՒՅ

ՀԵՂԸՆԳՐԵՅ.

(Ե-բ-ն-ի- Ար-ք-ս-ո-ւ, թ. 2.)

ՅՈՒԹԻՌԱՆ Ի՞.

1) ԱՂԹԱՆՑ ՓՈՍ.

Զայսմ տեղւոջէ այսպէս պատմեն աւանդապահ ծերունիք, թէ ի սկիզբն 14 գարուն թշնամին քրիստոնէից մեծ բռնակալն Ասիոյ Լանկ - Թամուր հիմն ի վեր կործանեալ զյոլով աշխարհու եմուտ ի Հայաստան և յոլով նախճիրս արեան գործեալ քանդեայ կործանեաց զբազում քաղաքս և զգիւղս, եհաս, առեն, ցահմանս Հաղբատայ լեռնային ճանապարհաւ ի գիւղն Խաչ - Դուռ կոչեցեալ և անտի զօրու ծանու գիմեաց ի վերայ Հաղբատեցւոց առ ի կործանել զաշխարհահոչակ վանքն, եկն եհաս մինչ ի տելին՝ որ կոչի Աղբանց Փառ. բնակիչք Հաղբատայ և կուսակրօն մատքանք վանիցն ապաստան եղեալ յազօթս առ Աստուած, և պատրաստեալ զանձինս ի մահ յայտնի՝ միմիայն կամուլով վերստին պահպանել ի գերութենէ զաստուածընկալ կենաստու սուրբ խաչն՝ ի ձեռս առեալ զայն սուրբ Նշանն ելին ընդ առաջ բռնակալին առ ի համոզել զմիտս նորա և ինդրել զգթութիւն։ Լանկն - Թամուր տեսեալ զհանգէս մարանական թափորի՝ զարհուրեալ դողացաւ յաներեւոյթն հրաշից աստուածընկալ Փայտին կենաց և աճապարեալ ի տեղւոջէն Աղթանց - փոս դարձաւ յետս զօրօք հանդերձ ի փախուստ։ Իսկ մի ոմն ի դպրաց Մոնթ անուն՝ տեսեալ զփախուստ նոյտ և իմայեալ զնախախնամութիւն վերին տեսչութեան, որ աներեւութաբար մարտնչէր ընդ թշնամեաց, պնդեցաւ զհետ փախստէին քանի մի զինավառեալ արամբ մինչեւ ցգլուին Օլէ քարափին, և անտի ևս շարունակաբար վանեալ հալածեաց զիոսա մինչ ցկէս ճանապարհն Հաճարկուտի. ուրանօր յետս հայեցեալ թշնամեաց՝ տեսին զքանի մի արս, որք հալածեն

զնոսա, ուստի յարձակեալ ի վերայնոցանահատակեցին զնոսա. և ապա կալեալ զՄոնղն ի մէջ ճանապարհին հարին զգետնի. և վէմ մի մեծ եղեալ ի վերայնորա ճիւլեալ, ճմլեալ ջարդեցին զնա. և ինքեանք փախստական գնացին ի գիւղն Խաչի-Դուռ, և անտի անցեալ ի Բերդիկ մտին ի գիւղն Ալբան (պղնձահանքն) քանդեցին զկաթուղիկէ Աստուածածնայ եկեղեցւոյն Յունաց: Յօրէ աստի մնացեալ է կոչումն տեղւոյս Աղվանց - Հու. այսինքն յաղթանաց կամ յաղթութեանց փոս, որ ձիարշաւչեռի է ի վանից Հաղբատայ յարեւելս. իսկ միւս կոչումն, Սանդառը ի մէջ ճանապարհին Հաճարկուաի, ուր ընդ վիմօք ծածկեցաւ Մոնդ, և մինչեւ զայսօր ահազին վէմն այն կոչի Մոնդաքար: Մերձ սորա ի վերայ տափարակ բլրոյ սակաւ մի հեռի ի միմեանց կառուցեալ կան ուխտատեղիք յանուն սրբոյն Պետրոսի և Բարդուղիմէոսի առաքելոցն, այլ այժմ յաւերակս նոցա միմիայն տեսանին կիսակոտոր խաչաքարք: — Ի շրջակայս Հաղբատայ այժմ գտեալ աւերակքն երբեմն մարդարնակ գիւղօրէից են այսոքիկ:

2) ԽԱՉԻ — ԴՈՒՌՆ.

Զառաջին տեղի աւերակ գիւղօրայիցն մերձ ի Հաղբատ կարէ ունիլ Խաչի — Դուռն: Դիրք և նիստ սորա գովելի է և յարմարաւոր վասն երկրագործութեան խոտամարգաց և գոմայանգոց: Տեղիս յամենայն ժամանակի, մատակարարէ Հաղբատեցւոց ձեռն օգնականութեան յամենայն հարկաւոր դէպո: Բայցարձակ վարելահողք սորա սատար լինին ժողովրդոց առատ պըտղարերութեամբք, բարձրուղէշ մայրիք սորա պիտոյանան ի պէտս շինուածոց: իսկ խոտամարգիք սորտ նուիրեն զոնունդ ի կերակուր չորքոտանեաց: Խւրաքանչիւր գերդաստան Հաղբատայ՝ իսկ Երդնկեանք առանձնակի ունին աստ զբաժանեալ վարելահողու, տնատեղիս, կալս և խոտամարգս. կարեմ ասել, թէ Խաչի - Դուռն է գարունն Հաղբատեցւոց ամենայն հարկաւոր պարագայիւք:

Ի գիւղատեղւո՞չէ աստի յարեւմուտս ի վերայ հանքածին բլրոյ կառուցեալ կայ սագաշէն քարակերտ եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին. ի կիսաքանդ պարսպին տեսանին աւերակք սենեկաց ի պէտս հոգեւոր պաշտօնատարաց ի ժա-

մանակս շինութեան ուխտառեղւոյս։ Յիւրաքանչիւր ամս որպէս Հաղբատեցիք նոյնովէս և ի մերձակայ գիւղօրայից ուխտաւորք զան ինկօք և պատարագօք ի գուռն սուրբ եկեղեցւոյս, ի տօնի Վարդավառին։ Մեծահանգէս է տօնախմբութիւն տեղւոյս, զկնի սուրբ պատարագին ուխտաւորք զենուն զոյխարս և զարջառս, պատրաստեն կերակուրս, և նստեալընդհովանեաւ բարձրուղէշ ծառոց՝ ուտեն համեստ քաղաքավարութեամբ արք և կանայք։ և ապա յառնեն ի կատարել զխաղերգութիւնս ի հանդէս մեծափառ տօնին, ջուր ցանելով ի վերայ միմեանց, երգել զերգս նուիրեալս յասողաց յանուն սըրբոյն Սարդնի։

Արտաքոյ պարսպի սորա է շքեղ հնաշէն կալապան Հաղբատայ վանից, իսկ յարեելս առ ճանապարհաւն է հին գերեղմանատունն նախնի կամ իսկապէս ասել հեթանոս բնակչացն Խաչի - Դրան մեծամեծ անտաշ տապանաքարիւք։ Ի հիւսիսակողմն ի ձորակին հոսի աղբիւր ջրոյ, բերեալ խողովակօք ի Սուրբ Լոյս լեռնէ յարբուժն բնակչաց տեղւոյս։

3) ԺԻՎԱՆՔ.

Ի Խաչի - Դրանէ զայռ ի վայր ընդ ձորամեջն իջանէ ուղի ի գիւղատեղին ժիւլանք։ Աւերակ սորա ըոլորովին ծածկեալ է մայրիւք և մացառօք, ի քանի մի տեղիս կանգնեալ կան փոքրագիր սոլիտակ խաչաքարք՝ եղծեալ արձանագրութեամբք։ Ի հնումն այս ձորագիւղ եղեալ է ճոխ և հարուստ, և այժմ տեսանին ի սմա աւերակիք քարուանսարայի և կրսպակաց, վարելահողքն յոյժ սակաւ, կարծեմ այս ձորագիւղ լեալ է իջեւան երթեեկութեան ի ներքին դաշտագիւղօրէից ի վերին լեռնաբնակ գիւղօրայս։ Այժմ յանբնակ վայրի աստ Հաղբատեցիք երբեմն պահպանեն զտաւարս իւրեանց։

4) ԱԶԻԹ.

Աւերակ գիւղատեղիս կայ առ ստորոտով Ամիր - Զաքարայ Երին ի հարաւակողմն Խաչի - Դրան։ յոյժ յարմարաւոր են Դիրք սորա ի մէջ ստորանկեալ լեռնափակ ձորադաշտի։ Այս յերկուութաղս բաժանեալ գիւղատեղին ունի յոլով վարելա-

հողս, ջաղացատեղիս, խոտամարգիս, դոմայանդս, մայրիս, պտղաբեր ծառս, հին գերեզմանատունս հանդերձ անտաշ տապանաքարիւք և կիսաքանդ աւերակաւ միոյ եկեղեցւոյ. որով ցուցանի երբեմն մարդաբնակութիւն սորա. այլ թէ Երբ կամ ուր գնացին բնակիչք այսր մեծանիստ աւերակի՝ չէ յայտ ումեք: — Մերձ սորտէ Քիսադամ գիւղատեղին յաւերակա:

5) ՄՈԽԾԱՇԷՆ ԿԱՄ ՆԱԽԾԱՇԷՆ.

Մերձ ի ծաղկազարդ և ի խոտաւէտ Գլւանէր գաշտահովիտ լեառն դեպ ի հարաւ է աւերակն այսր գիւղատեղւոյ, ունելով բաւականին վարելահողս, ազբիւրս և առուակս և մայրիս: Տեսանի աստ աւերակն հին եկեղեցւոյ, և վաղեմի գերեզմանատունն որձ և անտաշ տապանաքարիւք: Քսան ամօք յառաջ քայս սոյն գիւղաբնակ հարիւրամեայ կինն Թամար անուն Ամիրջանեանց Շնօղեցի չափազանցութեամբ պատմեր զճոխ բազմութենէ և զկործանմանէ գեղջս յաւաղակաց լեկզեաց, որք յափշտակեալ զբազմաթիւ նախիրս, գերի վարեցին զբնակիչս. իսկ մնացեալքն փախստական անկան յայլ և այլ տեղիս, թողին զգիւղն աւերակ:

6. ԿԱԽՄԱԽՈՒՏ.

Առ ստորոտով Առաջնակը լերին գտանի աւերակ գեղջս. առանց հնութեանց ինչ. այլ միմիայն գերեզմանաքարքն առ քարձրուղէշ Մամբրէի կոչեցեալ կաղնեաւն ցուցանեն զլինելութիւն գեղջս: Կարծիս ունին ոմանք, թէ ի Կախմախուտ՝ ի հնումն եղեալ են վրանաբնակք կամ թափառականք:

Մերձ սորա է աւերակն Խնչութիւնն, այժմեան Խնձորանց թալայ, կից ընդ Առաջ թալային: Ի հարաւակողմն Խաչի - Դրան գտանի ուխտատեղին սուրբ Յակոբ:

7) ԲԵՐԴԻԿ.

Է աւերակ ամրապինդ գեղատեղւոյ ի վերայ միոյ բլրադաշտի պատեալ անտառօք և անմատչելի քարտայոիւք. աստ ի Բերդիկ ի հարաւ գտանին խաչաղարդ գերեզմանատուն հանդերձ սուրբ տապանաքարիւք և երկու սագոշէն քարակերտ մատ-

ոռւնք. յորմն առաջնոյն կայ խաչ կանգնեալ այսու արձանա-
գրութեամբ։ «Ես Բէգւարս կանգնեցի զխաչս ինձ և մօր իմոյ
Աղասի»։ Մերձի միւս մատուռն ի վերայ խաչաքարին գրեալ
է այսպէս։ Յամիր սպասալարութեան Զաքարէի և Կվանէի ես
Գրիգոր որդի Յիոնէի՝ թողի զձիւնաւարահարկս *) Բերդկայ
վասն Նահնշահի արեշատութեան և ինձ մեղացս թողութեան»։

Ի ԲԵՐԴԿԱՃՈՐԻ աստ առ ընթեր պտղաբեր այգեստանեաց ի
վերայ ԴԵՐԵԳԱՅ գետոյն տեսանի ցարդ վաղեմի Հիմնարկու-
թիւն քարաշէն կամրջի, ի Բոմբ իշխանէն. երեխ վաղահաս
մահուամբ նորա շինութիւնն մնացեալ է կիսակատար, և սրբ-
բանաշ քարինք կուտակեալ կան ի լանջավայրո բերդկաճորոյ:
Մերձ այոր կիսակատար կամրջի ի վերայ յերկուց կողմանց սե-
պացեալ քարաժայոից կառոյց ապա Յովհաննէս քահանայ մաս-
նակցութեամբ եղբարց իւրոց զնոր կամուրջ ի Հիմանց քարու-
կիրեալ բրգօք յաւուրո իշխանութեան Պարոն Սագունին, և ի
թուին ԶԻԲ (1273) կանգնեաց ի ծայրո կամրջին յապատժ-
վիմին ստուար պատուանդանօք հսկայածե քարեայ իւայ յա-
նուն սուրբ Յովհաննէս Աւետարանիչի. ուր յանախեն ուխտա-
ւորք ի Հաղբատայ: Ի վերայ պատուանդանի Խաչին գրի այս
արձանագրութիւն:

Կամաւն Աստուծոյ յիշեանութեան Պարոն Սագունին և ի տէ-
րութեան տէր Յովհաննիսի ևս Յովհաննէս քահանայ և եղբարք
իմ Յունան, Դաւիթ և Մխիթար կանգնեցաք զսուրբ իսայո և
զկամուրջո ի հիմանոց . . . գնած է . . . զինն . . . , ասացէք
Աստուծ ողորմի ինձ և ծնողացո և սնուցանողիս Ատեփ . . .
ի թուին Հայոց Զիբ . . . ի ճակատ իսային գրեալ է * Սուրբ Աւե-
տարանիչն Քրիստոսի Յովհաննէս . . .

Այս կամուրջը էլ վերջին ժամանակու կործանեցաւ. բայց յառարս իմ հոգելոյս տէր Յովչաննէս քահանայն Պարսինքեանց Տփխիսեցի ի 1836 ամին, և տէր Ստեփանն Մանդինեանց Տփխիսանակ Հաղթատեցին ի 1843 ամին սեպհական ծախիւք իւր-

(*) Ո՞ւ ուրեք տեսանեմ, թէ ի Բերդկայ բերեալ իցին ձիւն որպէս հարդ, թերեւս պահանջեալ ից'ն երբեմ գրամական հարկ անուամբ յէն-ը-ն-ը որպէս այժմեան խոտահարկ, կամ անտառահարկ.

եանց նոր ի նորոյ շինեցին ասխտակամած կերտուածովք վասն յիշատակի իւրեանց :

Հանդէալ Բերդ կաձորոյ յայնկոյս գետոյն մերձ ի կամուրջն է գոմայանդն Հայաքոյն, որ ունի առ ափամբ գետոյն զքանի մի օրավար վարելահողս զէալ ի Բաղէնք :

8) ՆԵՂՈՑ.

Ընդ մէջ աւերակացն Գլիզնածորոյ և Խանջակայ յարեւլս կոյս ի վեր գնացեալ քարքարուտ ճանապարհաւն ելեալ ի քարագլուին տեսանես զաւերակ գեղջն Նեղոց, փոքր դրիւք և խաչաղարդ հանգստարանօք յանմատչելի և յանառիկ վայրս Բնակիչք սորա յամենայն ժամ հոյակեալ են քաջութեամբ ընդ դէմ յարձակմանց Լեկղեաց, և ցարդ ևս առակօք խօսին ծերունիքն զքաջութենէ նախնի բնակչաց տեղւոյս թէ՝

• Մտի ի Նեղոց՝ ձեռս առայ սղոց. խերխեցի Լեկղիս, հանգեաւ սրտիս բոց, լաւցաւ ջանիս խոց . .

Այս սուղ բանք յայտնի տպացոյց են քաջագործութեանց Նեղոցեցւոց, որք իբրև առաջնապահ զօրք կացեալ աստ՝ պահպանեալ են զհունն Դէրէդայ գետոյն (որ այժմ կոչի Լեհու-Դէղու-ան, անց) և զմեծ ճանապարհն ձորոյն, սահման գնելով յարձակմանց Լեկղեաց ի գիւղօրայս Զորագետցւոյ: Փանք և պատիւ անձնանուէր քաջացն Նեղոցայ:

Ի վեր քան զայս գիւղատեղին յարեւլս կոյս մերձ ի լեառն գտանի Սէդունէ Թալլայ ամարանոցն ընակչացն Նեղոցայ: Մերձ ի Նեղոց են անապատ տեղիքն Տաղդայուր և Խանջակայս սակաւաթիւ վարելահողիւք և բազմաթիւ պտղատու ծառօք: Սարգիս արքեպիսկոպոս առաջնորդն Հաղբատայ ի 1086 ամին աստ ի Խանջակաձոր շինեաց ազատաղաց ջրաղացն, էարկ զայգի, տնկեաց գրախտանման զանազան մրգաբեր ծառս ի փառս սըրբոյ Նշանին, և ապա ի 1089 ամին կանգնեաց զնշանն տէրունական, զէն հաւատացելոց և պահապան թագաւորացն Մերոց կիւրիկէի, Սմբատայ և Դաւթի՝ զարմի սոցա: Զարձանագրութիւն նորա տես 1 յօդ. գրոյս № 4:

9) ԳԼԻՉՆԱԶՈՐ *).

Աւերակ գիւղատեղիս ի ձորադաշտի ի հարաւակողմն Դէքէ-դայ գետոյն ունի վարելահողս բաւականս և զպիտանացու ան-տառս և ծառս պտղաբերս։ Ի վեր քան զգետն ի դուռն ձո-րադաշտին բարձրանայ փոքրիկ քարաբլրակ յորոյ վերայ ի տա-փարակ տեղւո՞ն կանգնեալ կայ խաչաքար յանուն առ-լիտակ։ Պատմեն թէ մեծն Վարդան՝ ի խաղալն իւր զօրօք յօդ-նութիւն Աղուանից ի պատերազմին ընդդէմ Պարսից, աստ իջևանեալ իցէ, և զկնի նահատակութեան նորա տեղիս այս կոչեցեալ է վասն յիշատակի նորա նահատակ։ Ի վեր քան զայս է գերեզմանատունն մեծամեծ տապանաքարիւք։ Յայսմ աւե-րակի Հաղբատեցիք ի ձմեռան պահպանեն զտաւարս։ Մերձ ի քարեասին Վարդանայ ի վերայ գետոյն եղեալ քարաշէն կա-մուրջ Յէլուց կոչեցեալ, որոյ քարուքանդ հիմունքն այժմ մի միայն տեսանին։

10) ԿԱՐԱՊԵՏԱԶՈՐ.

Աւերակ գիւղատեղիս գտանի յանկոյս ձորագետոյն ի զոգ միոյ ձորադաշտի առ ստորոտով Նէկաքար լերին. սակաւ են աստ վարելահողք, և աւերակք այգեստանեայց և յոլով պըտ-դառք ընդ ձորն ի վեր։ Գոյ աստ տաք աղբիւր։ Յեզր գիւղատեղւոյն է խաչաղարդ գերեզմանատուն, և աւերակն եկեղեցւոյն յանուն սրբոյ Կարապետի։ Աստ է մաքուր կրա-հանքատեղին Կաթանքայ։

11) ԱԹՈՒԻԿԻ.

Հանդէպ Կայան բերդի յարեմուտս յանկոյս գետոյն Դէքէ-դայ մերձ ի սահմանս Պղնձէհանքի գտանի Աթոռիկ գիւղատե-ղին վանաց ի վերայ արեգունի լանջավայրի ունելով զառաջեաւ առ ափն գետոյն զվարելահողս և զաթոռկատափն, բայց վեր-

(*) Յատուկ անունս Գլէն-յոր նշանակէ զլի կամ գլորեցի զնա ի ձոր, Ասեն՝ թէ երկու տիրող իշխանք յարուցեալ են վէճ և կոիւ վասն կա-լուածատեղւոյս. մին յաղթեալ միւսոյն ի քարադլիէ անտի ձգեալ է զնա ի ձոր. Յօրէ անտի մնացեալ է մինչև ցարդ զլի - զնա - ի ձոր կոչումն,

ջինս ոչ ունելով ի մօտոյ զջուր՝ գողցես անպէտ մնայ մինչեցարդ։ Յեզր գիւղատեղւոյն ի վերայ փոքրիկ բլրոյ կառուցեալ կայ մենարանն յանուն Անդրէկ զօրավարին, այժմ իսպառ խախտեալ։ Զմենարանէս այսպէս գրէ Կիրակոս. «Առեալ զայս գիր հաւանութեան իմաստնոյն վարդապէտին Վարդ անայ, առալէ առ կաթուղիկոսն Կոստանդին ի Կլայն Հոռիմէական, և ինքն եկեալ ի Կայանայ մենարանն իւր, զոր սուրբ Անդրէ կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայանոյ և անդ դադարեալ յուսուցանել զբաղումն, որք աշակերտէին նմա վարդապետական բանին»։

Այս արժանայիշատակ վարդապետ Էացեալ ի մենարանի լւրում վախճանեցաւ խաղաղական մահուամբ և եղաւ ի շիրիմ Կանգնեալ կայ ի վերայ դամբարանի սորա մինչեւ ցարդ հոկայտձեւ խաչաքարն. և ի մեծադիր կոփածոյ տաղանաքարին փորագրեալ է թիւ մահուան Զիբ (յամին 1273)։ Ի խաչանի շիրմէ աստի ի ձորակն ի վեր տեսանին աւերակքն լարաձեւ շինուածոց նախկին բնակչաց Աթոռկայ։

12.) ԽՐԱՄԱՀՈՐ.

Ի Հաղբատայ երեք մղոնացափ հեռաւորութեամբ յարեւելս հիւսիսոյ է Խըմայնը լի աւերակօք տանց և այգեստանեայց և բարձրուղէշ ծառով ընկուղենեաց, ի ձորամիջի անդ գոյ ականակիտ աղբիւր՝ քարեայ աւաղանօք։ Հիմունք լարաձեւ աւերակացն ցուցանեն զդասսւորութիւնս շինուածոց նախնի բնակչաց տեղւոյս ի բերդիագլուխ բլրադաշին տեսանի աւերակն գիւղատեղւոյն Խրամաձորոյ սակաւ վարելահողիւք։ — Ի գլուխ Խրամաձորոյն գոյ խաչաղարդ գերեզմանատուն. միջավայրի խաչաքարն կոչի յանուն Աբբայն Գէւրէտայ զօրավարին. դաշտավայրն զերեզմանատան անուանի . Եւ—է Գը—է . վասն դժուարութեամբ ելիցն ի ձորէն ի դաշտս Հաղբատայ։ Ասեն թէ՝ Լանկ—Թամուր յԱղտալայէն ճանապարհաւն Խրամաձորի վերստին դիմեաց աւերել զհաղբատ, և պահնակք կալեալ զկիրճս ուղւոյն յետս դարձուցին դատարկաձեռն. ի ստորոտս քարագլխոյն առաջի աւերակ դղեկին առ ճանապարհաւն տեսանին գերեզմանք նահատակելոցն ի զօրաց Լանկ—Թէմուրի կամ ի Նեկղեաց, Դղեակն Խրամաձորի առաջնապահ զօրօք

բազմիցս կալեալ է զառաջս աշխարհաւեր թշնամեաց, ելելոցն յեւ-ի գլուխն սփռել յափշտակութիւն և կործանումն Հաղ-ըատայ և վերին գիւղօրէից:

Յատուկ անուանք գիւղատեղեացն Հաղբատայ բերեն ընդ-ինքեանս զանազօտ պատմութիւն և բազմադարեան յիշատա-կաց և կենաց հնոց նովաւ ասն մեզ տեղեկութիւն, թէ նախ-կին ժողովուրդն յորսիսի՞ դրութեան եղեալ է, և քանի՞ չա-րուբարիս տեսեալ է յընթացս կենաց իւրոց յայսմ աշխարհի ըստ միջնադարեան յեղափոխութեանց ժամանակին: Այժմեան բազմաթիւ հնագոյն գերեզմանք ի դաշտի ի սար և ի ձոր յայտնապէս վկայեն զբազմամարդութենէնախկին ընակչաց այս Զորափոր նահանգին:

ՅՈՒՂԻՄ Ա. Ե.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆԱՊԵՏԱԿԱՆ ԱՆՑԻՑ ՎԵՐԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ.

1.) Աստղն ազատութեան և ինքնիշխանութեան սկսաւ լու-սափայլիլ յինները դարուն ի վերայ հորիզոնի քաղաքական կենաց խեղճ Հայաստանի: Նախարարական ցեղն Բագրատու-նեաց ունելով զառաջին տեղի ի մէջ քաղաքական կենաց Հա-յաստանի լաւութեամբ Աշոտոյ Ա. բարձրացաւ ի գահ արքու-նական: բայց ոչ կարաց ունիլ զնմանութիւն հոչակաւոր տոհ-մին Արշակունեաց: Սակաւութիւն բնակչաց, աղքատութիւն նորածին տէրութեան, ապականութիւն վարուց և բարուց, զինուորական անկարգաւութիւն, ներքին և արտաքին պա-տերազմունք, անհնազանդութիւնք քանի մի հզօր նախարա-րաց և ձգտողութիւնք նոցա առ ի հաստատել զառանձին ինքնիշխան թագաւորութիւն հանգոյն Աշոտոյ Ա. պատճառե-ցին զմեծամեծ մնասս այսր նորաբողբոջ թագաւորութեան և բաշխականի զարգացման հասարակական կենաց:

2.) Յաճախակի փոփխութիւն թագաւորաց զրկումն թա-գաֆառանգ արքայորդւոցն յաթոռոյ, մաքառումն եղրօր ար-քայի բազմիլ ի գահ արքունի՝ տկարացւոցին զնորածին Բագ-

բառունի տէրութիւնս, և ոչ թողին յառաջ խաղալ թագաւորական հաւատարիմ պաշտօնէից առ ի պատրաստել զհաստատ և զհղօր տէրութիւն։

3.) Յառաջացան օր ըստ օրէ անհամար խռովութիւնք, երկուառակութիւնք, ապստամբութիւնք, և արիւնահեղ ազգային պատերազմունք. օտարասէր կողմնապահութիւնն և ուսումնատեցութիւնն Հայոց ձեռնտու եղեն քանի մի հզօր նախարարաց՝ օգուտ քարել ի թոյլ նորաբողբք տէրութենէ անտի, ի բաց արկանել զիշխանութիւն օրինաւոր թագաւորի. և յանկարծ հաստատեցին նոքա դքանի մի լնքնագլուխ մանր և անզօր թագաւորութիւնս։ Օրինակ։

1.) Ի Վասպուրական նահանգի սկսաւ թագաւորութիւն Արծրունեաց 908 թ. որ անդ և ի Սեբաստիա ընդ ինն թագաւորօք տեւեալ զամս 170. վերջացաւ յամին իբր 1080։

2.) Ի Կարս քաղաքին Վանանդայ կանգնեցաւ փոքրիկ թագաւորութիւն Հայոց, որ ընդ երեք թագաւորօք տեւեալ զամս 122. իսպառ քարձաւ յամին 1080։

3.) Ի Բաղր գաւառի Սիւնեաց սկսաւ փոքրիկ թագաւորութիւն Հայոց ընդ վեց թագաւորօք ձգեալ զամս 196. դադարեցաւ ի 1166 ամին։

4.) Թագաւորութիւնն Անձեւացւոց և Ռշտունեաց բարձրացուցեալ զգրօշակ անկախութեան ցածուցին զզօրութիւնս Հայոց։

5.) Այլ արկանեմ ի թիւ սոցա հայկազեան հռչակաւոր առանձին թագաւորութիւնն Աղուանից։ Առ ի ցոյց ամօթալի անմիաբանութեան և անհնազանդութեան նախնեաց մերոց արժան վարկանիմ յայտնել ի լուր ամենեցունց, թէ յայսմ միջոցի մէմիայն ի մեծն Հայաստան կային Էօնն հակաթոռ թագաւորք Հայոց. օրինակ, 1.) Գագիկ օրինաւոր թագաւոր Հայոց յԱնի. 2.) Աբաս ի Կարս. 3.) Աշոտ ի Վասպուրական. 4.) Գուրգէն յԱնձեւացիս. 5.) Սենեքերէմ ի Ռշտունիս. 6.) Վասակ ի Սիւնիս. և 7.) Դաւիթ ի Տաշիրս. . . . Աւաղ տառապեալ Հայաստանին Հայաստան էր ընդարձակ և ճոխ, ին ընդ ամենայն տեղիս Հայ ընակչօք. բայց միայն հնազանդէր այնմ թագաւորի՝ ընդ որ հաճէր. իսկ թագաւորն՝ որոց իշխէր, հաղիւ թէ այնը և եթ գաւառին, ուր ինքն ընտկէր, ժո-

դովուրդն տարակուսեալ չզիտէք, որում թագաւորի ցուցանիցէ զհպատակութիւն։

4.) Ապա նկատեսցուք. Վերին Հայաստանն ըստ հայկական աշխարհագրութեան կոչեցեալն՝ Աշոցք, Տաշիր, Լոռի, Գուգարք, Ռւտի և Արցախ. այժմեան Բամբակաձոր, Լոռի, Բօրջամի, Ղազախ, Շամշադին և վերնամասն Ղարաբաղի ունելով զամուր և զանմատչելի տեղիս գրութեան, կարելի՞ էր արդեօք հանդարտ մնալ. ոչ. նա ևս յղացաւ ունիլ զմի նոր թագաւորութիւն և ահա Բագրատունի Դաւիթն Անհողին որդի Գուրգենայ, Թոռն Աշոտոյ Ողորմածի բարձրացոյց ի 906 թ. ԴԴրօշակ անկախութեան ի ժամանակս Բագրատունի օրինաւոր թագաւորաց, բաղկացոյց զմասն իշխանութեան իւրոյ Զորագետցի Հաստաբաղուկ և վիթխարի զինավառեալ երիտասարդօք զամս 56. Որդի նորա Կիւրիկէ Ա. յամին 1046, զամս 64. որդիք և թոռունք նոցա Արաս, Ամբատ, Կիւրիկէ Բ. 1089. Դաւիթ Բ. Կիւրիկէ Գ. և այլք թագաւորեցին յորդւոց յորդիս մինչև ցլերջ 12 դարուն ի վերին Հայաստան։

5.) Այս նորատեսիլ գարնանային ծաղկութիւնն ի Զորագետի մերում՝ առիթ ետուն արքայազն, պայազատ և սեպուհ իշխանաց Հայոց սեպհական ժողովրդականօքն զալ բնակիլ ի Զորափոր կազմել զնոր ինքնիշխանութիւն ի դաշտէն Շիրակայ, ուր սկիզբն առնու ձորագետն Դէքէդայ մինչև ցխառնուրդս Կուր գետոյն. և ունելով զպաշտպանողական զօրս հալածեցին զթշնամիս, և եղեն պատճառ նորանոր շինութեանց ի Զորափոր զաւառին։ Այժմեան լարաձեւ աւերակքն զիւղօրէից և պէսպէս շինուածոց, կիսաքանդ բերդօրայք, և պալատք իշխանապետաց երեւին մինչև ցարդ, նաև կանգուն շէն և անշէն եկեղեցիքն, թագաւորաշէն վանօրայքն, հոյակապ կամուրջքն, հարթ և արձակ ճանապարհքն Հաղբատայ, Սանահնի, Լոռոյ, Տաշրատափի, Խոժոռնոյ մինչև ցըերդաքաղաքն Շամշիլտէ. յայտնի ցուցանեն զբաղմամարդութիւն Զորափոր զաւառի. և այս պատճառաւ ի միջին դարու Հաղբատ և Սանահնին ստացան զանուն որպէս Մայրաւաղաւէն նոյնպէս և Հայրապէտանոցէ. տէս ի գիրս նախնի մատենագրաց մերոց։

6.) Ի 1104 ամի վերին Հայաստանն կրեաց զմեծ նեղութիւնու զօրապարն Պարսից Խլուիլ ամիրայ յանկարծակի յար-

ձակեցաւ ի վերայ Աղուանեան—Գուգարաց թագաւորութեան Հայոց և յետ բազմադիմի աւերածութեանց և սրածութեանց հրձիդ արար զվանօրայս Հաղբատայ և Սանահնի նաև զԼոռի բոլոր գիւղօրայիւքն:

7.) Յետ ծանրակշխու հարուածոց անկաւ թագաւորութիւնն Աղուանեան—Կիւրիկեցւոց և որդիք վերջին Կիւրիկէ արքայի ի Հաղբատ նեղեալ և ճնշեալ ի Դաւիթ արքայէն Վրաց խոյս ետուն ի Զորափոր գաւառէ, գնացին բնակեցան յԱրցախ—Աւտի նահանգ։ Եւ տէրութիւն նոցա իսպառ վերջացաւ յամին Եթ 1110-ն։—Յօրէ աստի 1124. թ. Վանքն Հաղբատայ անկաւ ընդ իշխանութեամբ Վրաց և բարձրացաւ հրամանու արքայից և կաթուղիկոսաց յաստիճան ա՛նուանէստ արքայի առանձին սահմանեալ վիճակաւ։

8.) Ի դառն ժամանակս երկպառակութեանց, ծագելոց ի մէջ Սելջուկեան թաթարաց՝ Դաւիթ արքայ Վրաց պատեհ ժամն գտեալ աիրեաց (1124) հիւսիսային կամ է Ալին կոչեցեալ Հայաստանի, և յաղթական զօրօք առաջնորդութես մը իշխանաց Հայոց դիմեալ ի Շիրակ, տիրեալ մայրաքաղաքին Անտոյ՝ Խաղաղացոյց զերկիրն, յանձնեաց զկառավարութիւնն երկուց քաջայալթ զօրապետաց իւրոց Արուլատի և որդւոց նորին Կվանէի։ Դիմիտրի Ա. Հանգոյն հօր իւրոյ զամենայն աւուրս թագաւորութեան իւրոյ պատերազմեցաւ ընդդէմ Սելջուկաց։ Ապա Փալտուն ամիրայ այլաղգի իշխան անհամար զօրօք զամն ողջոյն պաշարեալ զԱնի, ի վերջոյ առեալ զայն, նուաճեաց և զՆիրակ գաւառ։

9.) Զկնի 50 ամաց Գէորգի Գ. արքայ Վրաց զօրացեալ վանեաց զԱլօման շահն Խլաթայ, տիրեաց Անի քաղաքին, որոյ կառավարութիւնն յանձնեաց Ամիր-Սպասալար Պարոն Սաղունին Արծրունոյ, բայց տեսանելով թէ այս իշխան կամի Հաստատել զանկախ իշխանութիւն իւր, ստիպեաց զնա փախչիլ առ սուլթանն Ատրպատականի Աթաբէդ Էլ-Ղազի, և ի տեղի նորա կարգեաց կառավարիչ ի վերայ Անտոյ զՀայաղգի իշխանն Առէ որդին Կվանէի։ Ի յաջորդ ամին Գէորգի տիրեաց Դույն քաղաքի և յաղթեաց Էլ-Ղազից, որ ապա առաքեաց զԱլփ-Առլան զօրապետն թաթարաց բազմաթիւ զօրօք յաղթեաց Գէորգեալ և էառ վերատին ի ձեռաց նորա զԱնի։ Զկնի 10 ամաց

ԳԵՐԳԻ զարձեալ տիրեաց Անւոյ, և յաւուրս յաջորդաց նորա Սովորակարն Զաքարէ և Աթարէզն Խվանէ Հայազգի իշխանապետքն Երկայնաբազուկ Արդութեանց ընդ Երկար ժամանակու պատերազմ մղելով ընդ Պարսից և ընդ այլազգի տիրօղ իշխանաց, տիրեցին մեծի մասին Վելին և Արքէլէտան Հայաստանի և ամս 60 պահպանեցին ի խաղաղութեան զնորանուած զերկեր իւրեանց մինչեւ ցարշաւանս թաթարաց:

10.) Ի սմին ժամանակի ԳԵՐԳԻ Գ. ռիակալութեամբ ջնջեաց զազգատոհմն Որբելեան իշխանաց Հայոց, մի մի այն Լիպարիտ և եղբայր նորա Խվանէ ընդ Երկուց որդւոցն Էլիկում և Խվանէ գտին ինքեանց ապաստանարան առ զրանն Էլ—Տէգիզոյ: Զընդարձակ կալուածս Որբելեանց բաժանեցին ի միջի իւրեանց այլ և այլ իշխանք. իւկ պմիւս մասն աբքունի զանձարանն ինքեան սեպհականեաց զոռոզութեամբ:

11.) Ժառանգ ԳԵՐԳԻ Պ. գերահոչակ թազուհին Թամար, որ փառաց ի փառս բարձրացոյց զթազաւորութիւնն Վրաց, յետ նուաճելոյ զկաւկազարնակ աղինս, և մղելոյ զերեւելի պատերազմունս ընդդէմ Պարսից, և տիրելոյ ըոլոր տարածութեանց Երկրակումանցն Կուր և Երասխ գետոց, թոյլ ետ Որբելեան Հայ իշխանաց վերադառնալ ի Հայաստան. և շնորհեաց նոցա ի պատիւ նախահարցն իբրև սեպհական Հայրենիք և ժառանգական կալուած զնահանգն Սիւնեաց: — Սոյն Որբելեան իշխանքն օր ըստ օրէ զօրացեալ ի նահանգին Սիւնեաց, տարածեցին զրազուկս իւրեանց ի վերայ մեծի մասին արեւելեան Հայաստանի, վանելով անտի զմահմետականս, տիրեցին մինչեւ անգամ մայրաքաղաքին Անւոյ և կառավարեցին զայն ինքնիշխանապետութեամբ:

12.) Յաւուրս սոյն արժանայիշատակ թազուհւոյ բազումբ յազատ իշխանաց վերին Հայաստանի Հոչակեցին իբրև սխրագործ զանձինս իւրեանց պէսպէս քաղաքական և զինուորական ծառայութեամբ, որոց Երեւելեաց անուանքն՝ բաց ի պատմագրաց մերոց այժմ բացայսյու Երևին յարձանագրութեանց վանօրէից վերին Հայաստանի, ուստի աւելորդ Համարիմ զյիշատակեալսն յարձանագրութեան վերստին յիշխանակել աստ. բաց ի Սմբատ իշխանէն, որոյ կալուածատեղիքն մինչեւ ցարդ ի բերանս ժողովրդոց կոչին Անդրանից-Տնէլ ի Հազբատ:

13.) Ե սմին ժամանակի նման այլոց իշխանաց բնակելոց ի Զորավոր, իշխան ոմն Ամրատ անուն, որդի Քրդին, որդւոյ Ռւքանայ իշխանաց իշխանի կալեալ ի հարաւակողմն Հաղբատայ յանտառալից ձորամիջին զտերի բնակութեան եկաց անդորր կենօք. և ապա ոկուաւ կտրել զանտառու, հարթել զուղիս, յարմարել զվարելահողս, տնկել ի ձորամիջին ընդ մէջ երկուց քարագլուխ տափարակաց զորկուզարեր այգիս զրս խտանման պտղաբեր ծառօք: Ե ստորոտս այգեստանեայց իւրոց ի վերայ ձորամիջի գետոյն շինեաց ջրաղացս. իսկ ի կատարս քարաբլրոյն մերձ յաղբիւրն Օտարի շենս արարեալ շինեաց տուն, տեղի և ամբորանոցս, և ի վերայ Զալսան ազրեր՝ զհոյակապ պալատ իւր. մերձ ի պալատն կառոյց սրբատաշ վիմօք զմատուո Սաւէ Գէչուէս անուն, այժմ կիսաքանդ. իսկ ի շարս միապաղադ քարալանջին զգ ժուարագնաց քարայրս կրազանդ որմովք պատեալ, արար ապաստանարան ի ժամ յարձակման թշնամեաց: — Սահմանք Սմբատանց Տների են. ի հիւսիսոյ՝ ընթացք Սեղիք տուակի, յարեւելից՝ լեռնակատարն Առւրը—Լուսոյ, ի հարաւոյ ծիրանքաձորն, իսկ յարեւմսից՝ քարագլուխն Արնակայ տափի: Ե սմին տարածութեան ձորք, բլուրք, հող և ջուր, անտառք և խոտամարգք են սեղչականութիւնք իշխողացն Սմբատանց Տների:

14.) Սմբատեանք հետղչետէ քաղմացեալք կրեցին սակաւութիւն ի մասին կալուածոց, զնելին զկոգաձեւ բաւական վարելահողս ի դաշտին Արնակայ յարեւելից — հիւսիսոյ մինչև ցօալացի ջուրն: Առա անյայտ սպատճառաւ ձագեցաւ մեծ խոռվութիւն և մարդասպանութիւն ընդ մէջ Սմբատեանց և Արնակեցւոց, բայց միջնորդք խաղաղութեամբ հաշտեցուցին, և զսպանեալս թաղեցին ի սահմանագլուխս կալուածոցն Սմբատեանց յնիւնակ. և ի նշան հաշտութեան կանգնեցին զքարեայ խաչ, որ մինչեւ ցարդ կոչի Մարդասպանի Խաչ:

15.) Ցետ բազմատեսակ յեղափոխութեանց Սմբատանց Տներն եւս յաւերակ դարձաւ ի ձեռն թաթար բռնակալաց. և Սըմբատեանք ազգովին ցիրուցան եղեն, ոմանք ի սուր սուրերի մաշեցան և ոմանք ընդ նահնշահեան տոհմին փախտեամբ ազատեցին զմնացորդս իւրեանց ի վերին Վրաստան: Ցետ արշաւանացն նահարասի Սմբատեանք երեւցան ի Հաղբատ.

մինչեւ ցաւուրս Ռւտէացի Յովհաննէս իշխանին հաստատ մնացին ի ձորամիջի անդ ց 1730 ամն. և յորժամ որեւելեան բռնակալք զօրացեալ տիրեցին Հաղբատայ և այժմեան 12 աւերակ գիւղօրէիցն, յափշտակէցին զկայու Վանիցն, գերեալ զբնակիչս, արարին զշաղբատ իւսոս աւայի, յայնժամ Հաղբատեցիք և թոռունք Սմբատեանց, նաև Նահնահէեանք, Եիօյեանք, Բէզթարէգեանք, Ամիր—Սագունեանք, Գուրդ—Ռւքանեանք, Աւաքեանք և Պարոնեանք թողեալ զշաղբատ տեղափոխեցան ի Վրաստան կամ յայլ տեղիս և ոչ ևս ոտն կրիւցին յաւերակո Հաղբատայ:

16.) Հաղբատ և շրջակայ գիւղօրայք նորա ընդերկար մնացին անմարդաբնակ իրրեւ ամայի անապատ մինչեւ ց 1770 ամն. բայց յորժամ նոտաւ յաթոռ թագաւորութեան Վրաց Հերակլ Բ. արքայ Վրաց ի պատճառս պահպանելոյ զպարսկային սահմանագլուխս տէրութեան իւրոյ ի ձեռն Սբրահմամ վարդապետի (որ Լաթուղիկոսացաւ) Յէլիրդաւ ցւոյ վերստին նորոգեաց զշաղբատ սրար շէն և մոլոր ու կա: Ըստ սրբայական առանձնաշնորհւթեան և ուստի սմբաւթեան տեղւոյն քարոզութեամբ յէշեալ եպիսկոպոսին ի սույ միջոցի նախ և առաջ բնակեցան աստ Հայազգի եկե—Սիմոնեանք, Նամբարեանք, Գլոգիտեանք, Պրանեանք, Ամրսսթեանք, Բէզթանեանք և Աւաքեանք ընդ որս և փողահարուստ տանուտէր Յովհանն յազգէ Քուրդ Ռւքանայ այժմեան Քուր—Ռւհանանց Երդ կեանն, յետ կորուսանելոյ ի Դաւիտան զգէրի ուրեալ զւրկւս հարազատ եղբարս իւր վերադարձաւ ի Պաղարայ առ Զաքարիա եպիսկոպոսն առաջնորդն Հաղբատայ ի Յիշլիդ, և ապա գնաց աստի ի Հաղբատ յուխտ ի Համբոյք սուրբ Նշանին, բարեկամացաւ հարստութեամբն ընդ կողմնակալ Վրացի Ոիմօն պարոնին, և ընկալեալ ի նմանէ զտանուտէրական իշխանութիւն ի Հաղբատ, գնեաց բաւական գումարաւ զտնատեղիս և զվարելահողս հաստատ սիգէլաւ ի ձեռն կողմնակալաց Վրաց և Վէլիքաց Հայոց, սեպհականեաց ի ժառանգութիւն յորդւոց յորդիս, և ապա զվարեմի կալուածատեղիս Սմբատանց Տների, ձեռն ի գործ արկեալ վերանորոգեաց զայդեստանեայս, ինեաց զտմենայն հարկաւոր շինուածս տանց, զոմոց, մառանաց և զաւերակո ջրաղացաց: Այսպէս տնաշէն բարեկարգութեամբ

քաղաքավարեալ և հասեալ ի ծերութիւն թողեալ զերիս որդիս, Վարդան, Մարգար և Յարութիւն, վախճանեցաւ ի 1822 ամի: Զսա կոչեցին գիւղականքն Քուր—Ռէհան փոխանակ տուլոյ Քուրդ Ռէհան յանուն նախկին իշխեցողին Սմբատանց Տների:

Զգնածու կալուածագիր սորա կրկին հաստատեաց Վրաստանի արքունական պալատն Տէրութեան Ռուսաց ի 5. Մայիսի 1843 ամի բոլորագրութեամբ ի յայտարարական Մատենին համարաւո № 103 և 973 ի սեպհական ժառանգութիւն տոհմին Քուրդ — Ռէհանեան Թէղիկեան Երզնկեանց: Այս է վերջին մարդարնակութիւն Հաղթատայ:

17.) Այժմ գեղ յարեւելս Վերին Հայաստանի գարձուացուք զբան մէր: Ի սկզբան ձ Ը գարուն բերրի, ճոխ և լեռնոտ Երկիրն Վարտրագու ընդ մէջ Երասիս և Կուր գետոց ունելով ի միջի իւր զԱրցախ, զԱրսենիս, զԱրտի և զԳուգար նահանգո Վերին Հայաստանի 200,000 Հայ, 100,000 Թուրք և Պարսիկ բնակչօք սկահպանիւր ինքնագլուխ իշխանութեամբ մէլիքացն Հայոց, Տիրապետութիւն Պարսից աստ միայն լոկ անուամբ էր, Վարդարակն ընդ իւր մէլիքացն էր մի սկազ Հայկական տէրութիւն՝ բաժանեալ ի հինգ նահանգո — Զրաբերդ, Գիւլիստան, Վարանդ, Խաչէն. Դուզախ և Ռւաբիազուզար. իւրաքանչիւր նահանգ ու էր կառավարիչ մի ինքնագլուխ Հայ իշխան, կոչեցեալ Հէլէկամ Հալէս, որ Արարերէն նշանակէ թագաւոր: — Յետ գաղտնի թղթակցութեան և պատգամաւորութեան, Բաւէրա, որ լարեկամն էր սրեւելեան քրիստոնէից, յղացաւ ի միտս ազատել զՀայաստան և զԱրատան ի լծոյ Պարսից: Կայորընտիրն Բաւէրայի առաքեաց ի 1706 զՄինաս վարդապետ և զԻորայէլ Օրին ի Ա. Պետրոսւրդ ինգրել առ այս զգործակցութիւն մեծին Պետրոսի:

(Կը լուսավորի):

Ռուսաց — Թէկ Երզնկեանց: